ՄԱՅՐ ԱԹՈՌ

Օգոստոսի 26-ին Մայր Աթոռի միաբանութիւնը համեստ կերպով տօնեց իւր միաբանակից երկար տարիներ ծառայած տ. Համազասպ վարդապետ Համազասպեանի վարդապետութեան 50-ամեայ յոբելեանը։ Այդ օրը ս. պատարագից յետոյ, որ մատուցեց բարձրապատիւ յոբելեար վարդապետը, միաբանութիւնը գնաց տ. Համազասպ վարդապետի խուցը, որտեղ տ. Յուսիկ արքեպիսկոպոսն կարդաց Նորին Սրբութեան Վեհափառ Կաթուղիկոսի օրհնութեան կոնդակը՝ ուղղուած տ. Համազասպ վարդապետին, ապա տ. Յուսիկ արքեպիսկոպոսն միաբանութեան կողմից շնորհաւորական խօսք ասաց երկար տարիներ ծառայած վաստակաւոր ծերունի յոբելեարին, որից յետոյ ամենքն մօտեցան և շնորհաւորեցին հայրսուրբին։ Տ. Համազասպ վարդապետն ստանալով Վեհափառի օրհնութեան կոնդակը՝ զգացուած բարեմաղթեց Նորին Վեհափառութեան երկար տարիներ, քաջառողջ կեանք և ապա շնորհակալութիւն արեց իւր միաբանակից եղբայրներին։

Օգոստոսի 31-ին, երբ ստացուեց Ռուսաց քաջամարտիկ զօրքերի պատերազմի դաշտում ունեցած մեծամեծ յաջողութեանց մասին ուրախալի տեղեկութիւններ՝ Վեհափառ Հայրապետի հրամանով Մ. Տաճարում ս. պատարագից յետոյ կատարուեց Կայսերական գոհաբանական մաղթանք։ Մաղթանքի աղօթքն կարդաց տ. Աշոտ եպիսկոպոսն։ Ներկայ էին ս. պատարագին և մաղթանքին Վեհափառ Կաթուղիկոսը, ամբողջ միաբանութիւնը և աղօթողների մեծ բազմութիւն։

Նորին Վեհափառութեան բարեհաճ կարգադրութեամբ ուղարկուեց Սինոդի միջոցով մի հազար ռուբլի Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Տ. Փոխարքային՝ իբրև նպաստ վիրաւոր և հիւանդ զինուորների և նրանց օգնութեան կարօտ ընտանիքների։ Վսեմափայլ Տ. Փոխարքան իւր 26 օգոստոսի գրութեամբ տեղեկացնում է դրամ-

ների ստացման մասին և միաժամանակ յայտնում Նորին Սրբութեան իւր գոհունակութիւնը վերոյիշեալ նուիրաբերութեան համար։

Կովկասի Տ. Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական Նորին բարձր գերազնուութիւն Ն. Պետերսոնը իւր 25 օգոստոսի գրութեամբ դիմում է Ազգիս Վեհափառ Հայրապետին և յանձնարարութեամբ Տ. Փոխարքայի խնդրում Նորին Սրբութիւնից կարգադրել ժողովելու Ռուսահայոց բոլոր եկեղեցիներում գանձանակադրամ յօգուտ վիրաւոր և հիւանդ զինուորների, և գոյացեալ գումարը ուղարկել տեղական Պետական գանձարանների միջոցով Կարմիր Խաչի ընկերութեան։ Նորին Վեհափառութիւնը Իւր 29 օգոստոսի կոնդակով պատուիրում է Սինոդին կարգադրել շրջաբերական հրամանագրութեամբ յանուն թեմական առաջնորդների ժողովել բոլոր եկեղեցիներում գանձանակադրամ վերոյիշեալ նպատակով։

Տ. ՍՈՒՔԻԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐԶԵԱՆՑ

Սեպտ. 12-ին առաւօտեան ժամը 4-ին երկամսեայ ծանր հիւանդութիւնից յետոյ կնքեց իւր մահկանացուն ս. Էջմիածնի միաբան Տ. Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանցը 77 տարեկան ծեր հասակում։ Հանգուցեալը ծնուել է Հին Նախիջևանի Աստապատ գիւղում 1837 թ. դեկտեմբերի 10-ին։ Մտել է ս. Էջմիածնի կուսակրօն միաբանից շարքը 1849 թ. հոկտ. 20-ին. ուսումը ստացել է ս. Էջմիածնի ժառանգաւորաց դպրոցում։ Ընդունակ սովորող է եղել և բաւական հմուտ էր գրոց լեզուին։ Դրպրութեան աստիճան է ստացել 1856 թ. մայիսի 20-ին։ Տ. Մակար արքեպիսկոպոսից (յետոյ կաթուղիկոս) ստացել է հանգուցեալը սարկաւագութեան աստիճան 1857 թ.